3· ...հայկազնեայ տոհ մի սեւ սե ռ խս Թ որ-
գ ով եայ

4· ի կայթ ող իկ ոս ու թե տն Յակ որ այ եւ
յ ար խս կ ան եւ քաջատո հմ յից

5· խան ու թե Պռ ոշայ եւ որ դոցն Պապ աք են
Հաս ան ա մ անկան Էաչոյ չ են եց աւ

6· սր եկեղեցի սի բնակ ար ան փառացն Այ եւ
յ ար կ սրբոյն Ստ եփ ան ոսի յ եր կ ար
կ են դան

7· ու թի պարոն այն եւ աս հման եցաք փոխ
ման: Գ: աւր ամ է նն կե ղե ցիքս պատ ար
ագ ել զՔս

8· մեծ Պար ոն են մն րոյ Պռոշայ կա տ ար-
ինչք գրոյս աւր հն են յԱյ

9· մեք պար ոնայքս եւ մի աբան քս ար ձ ան-
ագր ե ցաք որ

10· ...յԱյ եւ յ ամ ենայն սր բոց ամ են

---

*Արձանագրութեան առաջին քարն ընկած է, որով եւ առաջին երեք տողերի սկզբի բառերը պակաս: Առաջին տողի սկզբում թիւն էր, հաւանօրէն: Մուրճով կոփած եւ քերած է նոյնպէս իններորդ տողի երկրորդ կէսը եւ տասի առաջին կէսը: Եօթերորդ տողի սկզբում «ութի» վերջաւորութեան մէջ ո-ի առաջին գիծը սրածայր երկաթով նորոգած է. թ-ն կիսով չափ տեսանելի: Նորոգած է նաեւ ութերորդ տողի «մեծ» բառի առաջին տառի գծերի մի մասը, ինչպէս եւ «ծ» տառը:

Արձանագրութիւնը խոշոր Մեսրոպեան երկաթագրով է եւ ԺԳ. դարին յատուկ լիգատուրների հետ, ունի եւ անսովոր, բարդ երեւոյթներ, որ դարու վերջերին է յատուկ եւ ԺԴ-ին: Օրինակ երրորդ տողի «տոհմխս եւ» միացած են ս եւ եւ:

Տես. Ջալ. Բ. 208: Բաջբերունի. Արար. 1889. 102: Ալիշան. Այր. 120. տարբեր ընթերցուածներով. մերը ճշգուած տեղում եւ լուսանկարի վերայ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 18բ.

Ա. Գրքի եր. 141, 182. Բ. Գիրք 160.
պատկ. 186.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

Հարաւային պատի վերայ, արեւմտեան նիշին կից.

1· [Կ ամաւ կ են ար արին ե] ւ կուսածին
անհ (s! — անմահ) թագ աւ որի ն յա(չ-
խարհակալութե)

2· [Ար զ ու նի իշխ ան ու]թե Խոչ աք են ող որ
մ ու թըն Պա պաք են Հ աս(անայ մանկանն
Էաչոյ եւ Խութլ)

3· [ու բէկ սթ ոռ նԽ ալ]այ չահ ինոր դի
Մխ իթ ար այ տ վի զ մեր տ(նկած)

4· [այգին զ] Գայլարեց հողն ավ ի սբ Ստ եփ
անոս մի այբա նքն սա հ մա նե ցին: Զ:
ժ ա (մ)... (:Գ: ինձ?)

5· [ի տաւնի սբ Սարգ]սին: Գ: Լ աս նայ եւ
Սար գ սի ի մա զզբեր ան ցն հոգոյն ի թվ.
Զ...:

6· [կատարիչքն] աւր հնին յայ:

ԾԱՆՕԹ.— Արձանագրութեանս տողերի առաջին եւ վերջին քարերն ընկած են. գտանք միայն նոցանից երկուսը՝ տողերի սկզբնաւորութեամբ, որ անկիւնաւոր փակագծերի մէջ ենք առնում, եւ նկարուած են ամբողջութեան հետ (պատկերի ձախ անկիւնում). մնացածը լրացնում ենք ինքներս դնելով բոլորաձեւ փակագծերի մէջ: Վերջին քարերն ընկած էին եւ Ջալալեանի ժամանակ. նրա լրացումները մասամբ սխալ:

Առաջին տողի վերջում պէտք է լինէր «յաշխարհակալութե», ի հարկէ որոշ կցումներով. այդ են թելադրում չեղագիր առաջին երկու տառերը, որ պարզ նկատելի են. Ջալալեանի եւ նորա հետեւողութեամբ Ալիշանի լրացումը պէտք է համարել սխալ:

Երկրորդ տողի վերջում պէտք է լինէր «եւ Խութլ», ի նկատի ունենալով երրորդ տողի անկիւնաւոր փակածի մէջ առնուած սկզբնաւորութիւնը եւ ապա Խութլուբէգի երկրորդ արձանագրութիւնը:

Երրորդ տողի վերջում պէտք է «տնկած» եւ ոչ «ձեռատունկ» ինչպէս ընդունում է Ջալալեան եւ նորա հետեւողութեամբ Ալիշան. նկատելի է առաջարկուած բառի առաջին երկու գիրը. տարածութիւնն էլ քիչ է Ջալալեանի ընթերցանութեան տառերը տեղաւորելու համար:

Չորրորդ տողում Ջալ. եւ Ալիշան կարդում են «զԳայլայլից», պիտի լինի «զԳայլարեց». ապա «Ստեփաննոսխ» պէտք է լինի «Ստեփանոս» .. «միաբանք» պէտք է լինի «միայբանքն». Ջալ. եւ Ալիշ. չունին «Զ. ժա..», որ պարզ երեւում է տողի վերջում: Տողի վերջում մտքի համաձայն կարող էր լինել «:Գ: ինձ»:

Հինգերորդ տողի մէջ Ջալալեանի կողմից եւ նորա հետեւողութեամբ Ալիշանի՝ մոռացծին է «:գ պատարագ Հասանայ» արտայայտութեան մէջ ընդգծուածը:

Սխալ է երկուսի մէջն էլ «Սարգսխ» ընթերցուածը, պիտի լինի «Սարգսի»: Ապա կարդում ենք «ազբերանցն»՝ ժողովրդական ձեւով՝ ն-ի բնորոշ՝ վերեւի կեռը թեթեւ նկատւում է արձանագրութեան մէջ: Տողի վերջում պակասում են թուականի տասնաւորն ու միաւորը. յամենայն դէպս գրուած է Պռոշի մահուանից՝ 1284 թուականից յետոյ, բայց ՉԽԱ թուականից առաջ, երբ մեռաւ Հասանը:

Վեցերորդ տողում «կատարիչքն» չատ աղօտ, պատկերից լիգատուրաներն ստուգել չենք կարող:

Կոստ. Վիմ. Տար. 96. առնում է Ջալալեանից: